



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՓՐՈՖ. ՖԵՕԼՆԸՐԸ

Չորեքշաբթի, 9 Սեպտեմբերի կեսօրին, Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց այցելութիւնը Վիեննայի Աստուածաբանական Համալսարանի դասախօսներէն Փրոֆ. Ֆեօլնըրի, որ կարճատեւ այցելութեան մը համար Լոս Անճելըս կը գտնուի:

Փրոֆ. Ֆեօլնըր, որ բարեկամներէն ու գործակիցներէն է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու Արեւմտեան մեր Թեմին, տեղեկութիւններ տուաւ իր աշխատանքներուն մասին: Առաջնորդ Սրբազանը ողջունեց անոր ներկայութիւնը եւ իր կարգին, տեղեկութիւններ հաղորդեց Ազգ. Առաջնորդարանիս գործունեութեան մասին: Հանդիպումին ներկայ եղան Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչները՝ Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

PRELATE WELCOMES PROF. HANS-JUERGEN FEULNER

On Wednesday, September 9th, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy Professor Hans-Juergen Feulner of the Institute for Liturgical Studies at the University of Vienna.

Prof. Feulner, who is on a brief visit to the U.S., is a long-time friend and collaborator of the Catholicosate of Cilicia and of the Western Prelacy. During their meeting, the Prelate and Prof. Feulner briefed one another on their recent activities and undertakings.

Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian also participated in the meeting.